

# Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ 33 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

/նիստը կայացել է 2020թ. սեպտեմբերի 4-ին **առցանց**/

Նիստին մասնակցում են մանկխորհրդի բոլոր 36 անդամները:

#### **Օրակարգում՝**

1. Օրակարգի հարցերի հաստատում: /զեկ. Ի. Վարդանյան/
2. Նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների մասին: /զեկ. Ն. Մխիթարյան/
3. Դպրոցի մանկխորհրդի կազմի հաստատում: /զեկ. Ի. Վարդանյան/
4. Մանկխորհրդի քարտուղարի ընտրություն, նիստերի ժամանակացույցի հաստատում: /զեկ. Ի. Վարդանյան/
5. 2019-2020 ուստարում համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման տարեկան ծրագրի/պլանի/ արդյունքների ամփոփիչ հաշվետվության քննարկում: /զեկ. Ի. Վարդանյան/
6. Ներքին գնահատման հաշվետվության քննարկում: /զեկ. Ի. Վարդանյան/
7. Զարգացման ծրագրի փոփոխությունների մասին: /զեկ. Ի. Վարդանյան/
8. Դրամահավաքության մասին: /զեկ. Ի. Վարդանյան/
9. ԿԱՊԿՈՒ աշակերտների մասին: /զեկ. Ն. Մխիթարյան/
10. 2020-2021 ուսումնական տարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման տարեկան ծրագրի/պլանի/ հաստատում, վարչական և ուսուցչական անձնակազմի կողմից ուստարվա ընթացքում դասալսումների քանակի սահմանում, դասալսումների ձևաթղթի հաստատում: /զեկ. Ի. Վարդանյան/

11. Մանկավարժական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածության, ուսումնական տարվա աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության սահմանում:  
/զեկ. Ի. Վարդանյան/
12. 2020-2021 ուստարվա օրինակելի պլանով նախատեսված դպրոցական բաղադրիչի բաշխում, ուսպլանի հաստատում:  
/զեկ. Ի. Վարդանյան/
13. Առաջին կիսամյակի դասացուցակի հաստատում:  
/զեկ. Ն. Մխիթարյան/
14. Խմբակների ձևավորում:  
/զեկ. Ն. Մխիթարյան/
15. Ուսումնական կաբինետների ձևավորման, դասարանների համակազմի ձևավորման մասին:  
/զեկ. Ն. Մխիթարյան/
16. Գիտելիքների, կարողությունների և արժեքային համակարգի ստուգման ձևաչափի հաստատում:  
/զեկ. Ն. Մխիթարյան/
17. Կազմակերպչական հարցեր:  
/զեկ. Ի. Վարդանյան/

Ելնելով մանկխորհի մի խումբ անդամների կարծիքներից, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նախապես հայտարարված օրակարգը:

Հիմք ընդունելով ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի կանոնադրությունը, մ/մ անդամների կարծիքներն ու առաջարկները, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Դպրոցի բոլոր մանկավարժներին, ծնողական խորհրդի նախագահին հաստատել մանկավարժական խորհրդի կազմում:

**Լսեցին՝**

Հիմք ընդունելով տնօրինության և մանկխորհի անդամների կարծիքները, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ա/ մանկավարժական խորհրդի քարտուղար ընտրել և հաստատել Ն.Մխիթարյանին:

բ/2019-2020 ուստարում հաստատել նիստերի 4.09.2020 , 17.10.2020, 26.12.2020, 20.02.2021, 23.04.2021, 8.05.2021, 5.06.2021, 19.06.2021, 30.06.2021 ժամանակացույցը:

Ելնելով դպրոցի տնօրենի ներկայացրած հաշվետվությունից և հաշվի առնելով արտահայտվողների կարծիքները, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հավանություն տալ 2019-2020 ուստարում համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման տարեկան ծրագրի/պլանի/ արդյունքերի ամփոփիչ հաշվետվությանը:

Հիմք ընդունելով ներքին գնահատման հանձնաժողովի կատարած աշխատանքները, քննարկելով ներկայացված ամփոփ հաշվետվությունը, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հավանություն տալ ներքին գնահատման հաշվետվությանը:

Ելնելով տնօրենի կողմից ներկայացված տեղեկատվությունից, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ընդունել դպրոցի զարգացման ծրագրի փոփոխությունները ի գիտություն, երաշխավորել խորհրդի հաստատմանը:

Հիմք ընդունելով ԿԳՄՄՆ հրահանգը և քաղաքապետի հրամանը մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Բացառել դրամահավաքությունը:

Հիմք ընդունելով I,V,X դասարանների աշակերտների պարտադիր վերագնահատման և գնահատման մասին գործող կարգերը մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Փոխտնօրեն Ն.Մխիթարյանին հանձնարարել նախապատրաստելու 5-րդ դասարանի աշակերտների վերագնահատման և 1-ին դասարանի աշակերտների գնահատման գործընթացը:

Ելնելով տնօրենի ներկայացրած պլանի դրույթներից և հաշվի առնելով մանկխորհի անդամների կարծիքները, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ա/ հավանություն տալ 2020-2021 ուսումնական տարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման տարեկան ծրագրին/պլան/ և ներկայացնել կառավարման խորհրդի հաստատմանը:

բ/ մեկ ամսվա կտրվածքով սահմանել դասալսումների/ վերահսկողությունների հետևյալ քանակը՝

տնօրեն - 4

ուսումնական գծով փոխտնօրեն - 8

ՄԿԱ – 4

ՄԴԱԿ-4

մ/մ նախագահ -8

դասղեկ -2

ուսուցիչ -4

աջակցող թիմ-8

գ/հիմք ընդունելով մ/մ –ի նիստերի որոշումները, հասատել դասալսումների և վերահսկողությունների ձևաթղթի ձևափոխված տարբերակը:

Ղեկավարվելով վերադասի հանձնարարականով և ելնելով հաստատության առանձնահատկություններից, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ա/ 2020-2021 ուստարվա պարապմունքներն անցկացնել վեցօրյա շաբաթական ծանրաբեռնվածությամբ

բ/ դասերն սկսել առավոտյան ժամը 8:30-ին:

գ/ EMIS.AM կայքը վարել պետական պարտադիր տվյալներին համապատասխան:

դ/ գործածությունից հանել թղթային օրոգրերը և հիմնվել միայն ԷԼԵԿՏՐՈՆԱՅՆ ՕՐԱԳՐ-ի վրա:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 31.08.2020թ.-ի Հրաման N°25- Ն-ի հավելված 1-ը, տնօրինության, մ/մ-ների առաջարկությունները և հաշվի առնելով սահմանված պայմանների առկայությունը, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ա) 2020-2021 ուստարվա օրինակելի ուսումնական պլանով դպրոցական պարտադիր ժամաքանակը տարրական և միջին դպրոցների դասարաններում ըստ ուսումնական և երաշխավորված առարկայացանկի առարկաների բաշխել ստորև նշված համամասնությամբ և ներկայացնել տնօրենի հաստատմանը.

2-րդ դասարան - 1 ժամ ռուսաց լեզու

3-րդ դասարան - 1 ժամ ռուսաց լեզու, 1 ժամ անգլերեն

4-րդ դասարան - 1 ժամ անգլերեն, 1 ժամ մաթեմատիկա

5-րդ դասարան - 1,5 ժամ ֆրանսերեն, 0,5 ժամ անգլերեն

6-րդ դասարան - 1,5 ժամ ֆրանսերեն, 0,5 ժամ աշխարհագրություն, 0,5 հայոց պատմություն

7-րդ դասարան - 1,5 ժամ ֆրանսերեն, 0,5 ժամ աշխարհագրություն, 0,5 հայոց պատմություն

8-րդ դասարան - 1,5 ժամ ֆրանսերեն, 0,5 աշխարհագրություն, 0,5 հայոց պատմություն

9-րդ դասարան - 1,5 ժամ ֆրանսերեն, 0,5 հ.աշխարհագրություն, 0,5 հայոց պատմություն

բ) Հաշվի առնելով դպրոցի ֆինանսական կարգավիճակը, ուսուցիչների մեկնաբանությունները, 3-րդ, 7-րդ և 9-րդ դասարաններում օտար լեզուները (ռուսերեն և անգլերեն) պարապել կհսկված:

Հիմք ընդունելով փոխսնօրենի զեկույցը մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հավանություն տալ ներկայացված դասացուցակին:

Հիմք ընդունելով փոխսնօրենի զեկույցը մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ձևավորել համապատասխան կաբինետները և դասարանները:

Հիմք ընդունելով փոխսնօրենի զեկույցը մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել մեթոդ միավորումների ներկայացրած գիտելիքների ,կարողությունների և արժեքային համակարգի ստուգման ձևաչափը:

Հիմք ընդունելով սնօրենի հանձնարարականները, կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) վարակի տարածումը կանխարգելելու նպատակով ուսումնակրթական գործընթացը հանրակրթական հաստատությունում իրականացնել ուղեցույցը և սնօրինության կողմից մշակված ծրագիրը, մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Բոլոր աշխատակիցների համատեղ ջանքերով ապահովել առողջ և անվտանգ աշխատանքային ու կրթական միջավայր:

**Ժողովի նախագահ՝**

**Ի.Վարդանյան**

**Քարտուղար՝**

**Ն.Մխիթարյան**